community

The New Apostolic Church around the world

04/2019/AM

Հոգիեզայլուստ 2019

Խմբագրական՝ Ողջ զորությամբ

Ժամերգություն՝ Ինչպես է ներգործում Սուրբ Հոգին

Ուսմունք՝ Քրիստոսի գալուստը

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Ողջ զորությամբ

Ժամերգություն

4 Սուրբ Հոգու ներգործությունը

Այց՝ Եվրոպա

10 Ես այստեղ եմ – Աստծո կողմից սիրված

Մանկական անկյուն

12 Հոգեգալստյան հրաշքը

14 Այց՝ Ռուբենին, Մարանգուապեում / Բրազիլիա/

Տեսություն

16 Քրիստոսի գալուստը

Կազմի առջևի լուսանկարը՝ Օլիվեր Ռյութթենի
Կազմի ետևի լուսանկարը՝ Յենս Լանգեի

Ողջ զորությամբ

Լուսանկարը՝ Միջազգային ՆԱԵ

Սիրելի հավատացյալ քույր-եղբայրներ,

Սուրբ Հոգին ուժգին է գործում – այդպես էր այն ժամանակ, այդպես է և այսօր, ու այդպես է լինելու վաղը: Սուրբ Հոգին հորդորում է, ուժեղացնում է, մխիթարում է և ոգեշնչում: Նա կյանքի բոլոր իրավիճակների մշտական ուղեկիցն է:

Մենք ճանաչում են Սուրբ Հոգուն իր ներգործության միջոցով՝

Քրիստոսի եկեղեցում նա ուժեղացնում է հավատը Հիսուսի հանդեպ- անգամ նաև հալածանքի, կարիքի ու տառապանքի պահին: Եվ ինչպես այն ժամանակ, այնպես էլ այսօր նա մղում է դեպի Ավետարանի շարունակական տարածմանն այն հավատով, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է:

Սուրբ Հոգին առաքյալների ծառայությամբ հավատացյալներին նախապատրաստում է Հիսուսի գալստյանը: Առաքյալների սպասավորության միջոցով հավատացյալներն ընդունում են Սուրբ Հոգու շնորհները և միասնաբար տոնում են Սուրբ Հաղորդությունը:

Սուրբ Հոգին գործում է համայնքներում- մեծ և փոքր համայնքներում, անկախ կյանքի պայմաններից և մշակույթից՝ նա կա:

Սուրբ Հոգին հավատացյալներին Հիսուս Քրիստոսին հավատարիմ մնալու, նրան հավատալու և վստահելու ուժ է տալիս: Սուրբ Հոգին ուժ է նվիրում հոգսերը կրելու և համայնքներում մերձավորին ծառայելու:

Ոչինչ չի կարող երբևէ խանգարել Սուրբ Հոգուն գործելու: Ոչինչ չի կարող Աստծո արքայության զարգացումը ընդհատել: Սուրբ Հոգին գործում է ողջ զորությամբ: Մենք պետք է համայնքներում, մեր մեջ ամբողջ ուժով այդ զորությունը տեսանելի դարձնել տանք:

Շնորհակալ լինենք Սուրբ Հոգի Աստծուն Քրիստոսի եկեղեցում, առաքյալների ծառայության մեջ, համայնքներում և յուրաքանչյուրի մեջ իր մշտական ներգործության համար:

Սրտանց ողջույններ

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

Սուրբ Հոգու ներգործությունը

Բոլոր աշխարհամասերի շուրջ 100 երկրներում հավատացյալ քույր-եղբայրները հետևում էին Գոսլարում/ Գերմանիա/ տեղի ունեցած ժամերգությանը:

Լուսանկարը՝ Օլիվեր Ռյուբենի

Կորնթացիներին Ա 12,13

Քանզի մեկ հոգով մեկ մարմին լինելու համար մկրտվեցինք մենք ամենքս՝ թե հրեաներ, թե հեթանոսներ, թե ծառաներ, թե ազատներ, և բոլորս էլ մեկ Հոգին խմեցինք:

Այո, սիրելի քույրեր, սիրելի եղբայրներ, Հոգեգալուստին մենք հիշատակում ենք Սուրբ Հոգով լցվելը, Քրիստոսի եկեղեցու հիմնումը, և իհարկե, դա պատճառ է տոնակատարության: Մեզ համար դա գեղեցիկ հնարավորություն է՝ գովաբանելու և փառաբանելու Սուրբ Հոգի Աստծուն: Ես գիտեմ, որ սա երբեմն մի քիչ աբստրակտ է թվում: Հայր Աստծո մասին մենք շատ պարզ պատկերացում ունենք: Կարող ենք լավ ներկայացնել Արարչին: Մենք տեսնում ենք արարչագործությունը: Հայր Աստծո պատկերը կապված է հոգատար հոր կերպարի հետ: Որդի Աստված ասելով անմիջապես հիշում ենք Հիսուս Քրիստոսին: Այստեղ մենք կարող ենք պատկերացումների մի ամբողջություն ներկայացնել: Սակայն, Սուրբ Հոգի Աստծո զորությունը մի փոքր վերացական է: Սուրբ Հոգու մասին չենք

կարողանում որևէ պատկեր ներկայացնել, Սուրբ Հոգուն կարող ենք միայն ապրել և ճանաչել այն գործերով, որը նա անում է մարդկանց համար և մարդկանց միջոցով: Մենք Սուրբ Հոգուն ճանաչում ենք իր ներգործության միջոցով: Եվ այդ ժամանակ դա անմիջապես կոնկրետացվում է:

Քրիստոսի եկեղեցու հիմնումից ի վեր՝ Սուրբ Հոգին ուժգին գործում է Քրիստոսի եկեղեցում: Նա ոչ մի անգամ չի դադարել գործել Քրիստոսի եկեղեցում: Այն ժամանակից ի վեր, որ Սուրբ Հոգին գործում է երկրի վրա, նա անհամար մարդկանց ճանաչել է տվել, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է: Եթե մարդը երբևէ եկել է այն գիտակցության, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, ապա դա եղել է Սուրբ Հոգու ներգործությամբ: Այդ ամբողջ ժամանակահատվածում Սուրբ Հոգին հոգ է տարել այն բանի համար, որ հավատացյալ մարդիկ, ովքեր հավատքով են լցվել Հիսուս Քրիստոսի հանդեպ, մկրտության միջոցով անդամագրվեն Քրիստոսի եկեղեցուն: Սուրբ Հոգին հոգացել է այն բանի համար, որ Ավետարանի ավետիսը շարունակվի տարածվել մինչև աշխարհի ամենահեռավոր անկյունը: Նա հոգ է տարել այն բանի համար, որ հավատացյալները Ավետարանի քարոզի շնորհիվ ամրանան իրենց հավատի մեջ: Մենք հիշում ենք այն մասին, թե այս դարերի ընթացքում քրիստոնյաները ինչեր են արել, ինչերի միջով են անցել՝ շատերը հալածվել են, մյուսները ապրել են կարիքի ու տառապանքի մեջ, իսկ Սուրբ Հոգին միշտ հոգ է տարել այն բանի համար, որ նրանք ուժեղանան և կարողանան Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատի մեջ հաստատուն մնալ: Քրիստոնեության ողջ պատմության ընթացքում այնքան շատ քրիստոնյաներ են եղել, որոնք դժվար իրավիճակներում են ապրել: Նրանք ասել են՝ Իսկ որտե՞ղ է հիմա Աստված: Եվ Ավետարանի քարոզի շնորհիվ նրանք հաստատուն են մնացել Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատի մեջ, ասելով՝ ,,Ոչ, ես հավատում եմ Հիսուս Քրիստոսին, ես հետևում եմ նրան,,: Հետո կարողացել են ճանաչել Սուրբ Հոգու զորավոր ներգործությունը: Սուրբ Հոգին գործել է Քրիստոսի եկեղեցում: Իհարկե, Քրիստոսի տեսանելի եկեղեցում շատ բաներ են տեղի ունեցել, որոնք գեղեցիկ չեն եղել, քանի որ մարդիկ միշտ կան և մնում են որպես մարդիկ:

Համայնքներում այրվում է Սուրբ Հոգու կրակը

Երբեմն շահարկվել է Հիսուս Քրիստոսի անունը, և նրան շահարկել են պատերազմներ մղելու համար: Քրիստոնյաներն էլ հալածել են ոչ քրիստոնյաներին և սպանել: Քրիստոնյաները կռվել են միմյանց հետ և

աջից՝ Աստվածաշնչյան խոսքի ընթերցմանը հետևում է աստվածաշնչյան ընթերցում Գործք առաքելոցի 2,36-43-ից:

ներքում՝ Սրտագին ողջույններ Գոսլարի / Գերմանիա/ եկեղեցուց

սպանել: Շատ այլ բաներ և ծանր սխալներ են արել նրանք միայն այն բանի պատճառով, որ մարդը պարզապես մարդ է մնում: Սակայն, Սուրբ Հոգին այն բանի համար է հոգ տարել, որ անկախ այդ բոլոր մարդկային անկատարություններից, Ավետարանը շարունակվի տարածվել և քրիստոնյաները կարողանան շարունակել հավատալ Հիսուս Քրիստոսին ու նրան հավատարիմ մնալ: Եթե դրա մասին մտածում ենք, ապա նկատում ենք, թե ինչ զորավոր, ինչ ուժգին է գործում Սուրբ Հոգին, և, չնայած բոլոր կարիքներին, փորձություններին և սխալներին, որոնք տեղի են ունենում, քրիստոնեական հավատը չի մահանում: Կան շատ քրիստոնյաներ, ովքեր հավատացյալ են և հետևում են Հիսուս Քրիստոսին: Մենք շորհակալ ենք Սուրբ Հոգուն, որ նա այդպես ուժգին գործել է և գործում է այս դարերի ընթացքում:

Մենք շնորհակալ ենք Սուրբ Հոգուն, որ նա գործում է առաքյալների ծառայության միջոցով: Առաքյալների ծառայության վերականգնումից ի վեր, Սուրբ Հոգին առաքյալների միջոցով գործում է զորությամբ: Նրանց միջոցով մարդիկ կարողանում են ընդունել Սուրբ Հոգու շնորհները և Հիսուս Քրիստոսով նոր արարածներ դառնալ: Սուրբ Հոգու ներգործությունը հնարավոր է դարձնում, որ մենք կարողանաք տոնել Սուրբ Հաղորդությունը և դրանով կարողանանք ճաշակել Հիսուսի արյունն ու մարմինը: Առաքյալների միջոցով Սուրբ Հոգին գործում է ուժգին և ասում Տերը շուտով գալու է: Սակայն, առաքյալների ծառայության վերականգնումից ի վեր, տեղի են ունեցել շատ փորձություններ, հաղթահարելու դիմակայություններ: Այս կամ այլ տեղ առաքյալներն ու նրանց հետևորդները հալածվել են: Սակայն, Սուրբ Հոգին շարունակել է գործել: Ոչ ոք չի կարողացել նրան խանգարել: Առաքյալներն էլ են մարդիկ, ովքեր կատարյալ չեն: Եվ, նաև այնտեղ, որտեղ առաքյալներն են գործում, առկա են սխալներ: Կարող է այնպես լինել, որ մարդկային տեսակետներն ու մշակութային պատկերացումները մի քիչ խառնվեն քարոզի հետ և այնպիսի բաներ քարոզվեն, երբ կարելի է ասել, այո, Ավետարանը դրա հետ ոչ մի առնչություն չունի: Առաքյալները ևս մարդիկ են, ովքեր բացարձակ կատարյալ չեն: Սակայն, մարդկային այս անկատարությունը երբեք չի խանգարել Սուրբ Հոգուն: Այն

Մենք շնորհակալ ենք Սուրբ Հոգուն, որ նա ուժգնորեն գործել է այս դարերի ընթացքում:



առաքյալների միջոցով ուժգնորեն գործում է: Եվ նվիրաբերվում են Սուրբ Հոգու շնորհները, տոնվում է Սուրբ հաղորդությունը և նախապատրաստվում է հարսնացուն: Մենք շնորհակալ ենք Սուրբ Հոգուն, որ նա միշտ ուժգնորեն գործում է առաքյալների միջոցով և ոչ կատարյալ մարդուն նախապատրաստում է Քրիստոսի հարսնացուներ դառնալ կարողանալու համար:

Սուրբ Հոգին ուժգին գործում է Քրիստոսի եկեղեցում: Նա զորությամբ գործում է առաքյալների ծառայության միջոցով: Նա ուժգին գործում է համայնքներում և Աստծո զավակների շրջանում: Մենք ամբողջ աշխարհում մոտավորապես 60 000 համայնք ունենք: Այդ համայնքներում այրվում է Սուրբ Հոգու կրակը: Ես հիշում եմ նախ երիտասարդներին: Դուք վստահորեն հասկանում եք, որ ես ևս մեկ անգամ անդրադառնում եմ վերջին շաբաթին: Բոլոր նրանք, ովքեր ապրել են երիտասարդների հետ հանդիպումը Դյուսսելդորֆում, կարող են վկայել, որ այնտեղ այրվում էր Սուրբ Հոգու կրակը: Այդ երիտասարդները ոգևորված են Հիսուս Քրիստոսով, հետևում են նրան և ծառայում են նրան: Դա ես ապրել եմ ոչ միայն

Ննջեցյալների համար Սուրբ Հաղորդությունն ընդունում են շրջանային առաքյալ Փեթեր Շուլթեն / Արևմտյան Աֆրիկա/ և առաքյալ Հելգե Մուչլերը / Հյուսիսային և Արևելյան Գերմանիա/

Շրջանային առաքյալ Ռյուդիգեր Քրաուզեն / Հյուսիսային// Արևելյան Գերմանիա/ բացում է Սուրբ Հաղորդության տոնակատարության նշխարամանները

Դյուսսելդորֆում, դա ես ապրում եմ ամեն անգամ, երբ աշխարհի ինչ- որ մի վայրում հանդիպում եմ երիտասարդների հետ: Վստահորեն դա արժանի է շնորհակալության, որ Աստված այդպիսի շատ երիտասարդներ է տվել, ովքեր այրվում են Հիսուս Քրիստոսի համար, ովքեր թույլ են տալիս իրենց ուսուցանվել և առաջնորդվել Սուրբ Հոգու կողմից: Սակայն, սա առկա է ոչ միայն երիտասարդների շրջանում: Ես կարող եմ հաստատել, որ դա այդպես է ամբողջ աշխարհի բոլոր 60 000 համայնքում: Նաև շատ փոքր համայնքներում, որտեղ ընդամենը մի բուռ հավատացյալներ են, Սուրբ Հոգին գործում է ուժգնորեն: Այնպես չէ, որ ասեն, ախ, մենք ընդամենը երեք հոգի ենք, մենք ընդամենը հինգ հոգի ենք- միևնույնն է, այնտեղ ևս Սուրբ Հոգին այրվում է իր ողջ լիազորությամբ: Նաև այդ փոքր համայնքներում Սուրբ Հոգին տարածվում է իր ողջ ուժով, և հավատացյալները կարողանում են ապրել Աստծո ներկայությունը: Նրանք կարողանում են ընդունել փրկությունը: Սուրբ Հոգին կապված չէ ինչ- որ թվերի հետ: Նա կարող է շատ փոքր համայնքում իր ողջ ուժով գործել, նաև՝ շատ անհնար իրավիճակներում: Ես մտածում եմ այն բազմաթիվ համայնքների մասին, որտեղ մարդիկ հավաքվում են փախստականների ճամբարներում: Մյուսները ստիպված են թաքնվելու և հավաքվում են անտառում: Նրանք ոչինչ չունեն, բայց ընդունում են փրկությունը Սուրբ Հոգու զորության միջոցով: Այն երկներում, որտեղ մենք շատ անդամներ ունենք, անգամ կալանավայրերում համայնքներ ունենք: Այնտեղ դատապարտվել են նորառաքելական քրիստոնյաները և պատժի ենթարկվել: Այնտեղ տոնվում են ժամերգություններ: Հասարակությունը նրանց ասել է՝ Մենք ձեզ չենք ուզում, դուք հեռացեք այստեղից: Սակայն, որտեղ ժամերգություն է տոնվում, Սուրբ Հոգին կարող է գործել իր ողջ ուժով: Նաև այդ քույր-եղբայրները, այդ հատուկ շրջանակներում գտնվող հավատացյալներն են ապրում Աստծո ներկայությունը, ճանաչում են Աստծո սերը և ընդունում են այն ամենը, ինչը նրանց փրկություն կբերի: Սրանք մի քանի կոնկրետ օրինակներ են: Մենք շնորհակալ ենք Սուրբ Հոգուն, որ նա այդպես ուժգնորեն է գործում յուրաքանչյուր համայնքում՝ ոչ կատարյալ մարդկաց միջոցով:

Սուրբ Հոգին գործում է ուժգին և աշխատում է ուժգին մեր քույր-եղբայրների մեջ: Մենք այնքան շատ քույր-եղբայրներ ունենք, ովքեր մեզ համար օրինակելի են: Նրանք մեծ դժվարություններ են կրում տարիներ ի վեր: Նրանք ունենում են կարիքներ, տառապանքներ: Երբեմն մենք մեզ հարց ենք տալիս՝ ինչպե՞ս են նրանք դա անում, ինչպե՞ս են հաղթահարում դրանք: Այդ քույր-եղբայրները վստահում են Աստծուն, նրանց վստահությունը անխաթար է մնում: Նրանք շարունակում են սիրել Հիսուս Քրիստոսին, հետևում են նրան և հավատարիմ են մնում: Կարելի է միայն զարմանալ և հիանալ: Ես մտածում եմ այն բազմաթիվ եղբայրների ու քույրերի մասին, ովքեր առանց հոգնելու ծառայում են Տիրոջը՝ կատարելով որևէ սպասավորություն կամ ծառայություն: Նրանք 250 պատճառ կարող են ունենալ ասելու՝ Ես այլևս չեմ համագործակցում: Նրանք պարզապես շարունակում են ծառայել, քանի որ նրանք իրենց առաջնորդել ու ղեկավարել են տալիս Սուրբ Հոգու կողմից: Մենք շնորհակալ ենք Սուրբ Հոգի Աստծուն, որ նա կրկին այդ քույր-եղբայրներին ուժեղացնում, մխիթարում և ոտքի է կանգնեցնում: Ես կցանկանայի Հոգեգալստյան այս տոնին մի առանձնահատուկ ավետիս տալ և առաքյալի խոսող բերանը լինել ամբողջ աշխարհում ու ձեզ՝ սիրելի քույր-եղբայրներ ամբողջ աշխարհի, ասել՝ մենք՝ որպես Հիսուս Քրիստոսի առաքյալներ, ասում ենք Պողոսի նման՝ մենք շնորհակալ ենք Աստծուն ուրախության համար, որը մենք ձեր միջոցով կարողանում ենք ապրել: Դուք մեր ուրախությունն եք: Այս շնորհակալությունը ես կցանկանայի արտահայտել բոլոր առաքյալների անունով: Մեկ անգամ ևս, մենք ասում ենք Պողոս առաքյալի նման՝ մենք շնորհակալ ենք Աստծուն այն ուրախության համար, որը մենք ձեր միջոցով կարողանում ենք ապրել: Դուք մեր ուրախությունն եք: Ես դա հավաստիացնում եմ:

Սուրբ Հոգու այդ ուժգին ներգործությունը Քրիստոսի եկեղեցում, առաքյալների ծառայության միջոցով, համայնքներում, քույր-եղբայրների մեջ, մեզ համար մխիթարության և ուրախության աղբյուր է: Դրա վրա է հիմված մեր հույսը: ՍուրբՀոգին ուժգին գործում է մինչև վերջ: Տեր Հիսուսը մի անգամ խոսել է Աստծո արքայությունից և այն համեմատել սերմի հետ, որը մարդը դնում է հողի մեջ: Նա ասել է, անկախ այն բանից, մարդն արթուն է, թե՝ քնած, աշխատում է,թե՝ ոչ, սերմը շարունակում է աճել և դուրս է գալիս հողից, ու նա չգիտի, թե ինչպես: Հիսուսը դրանով ուզում էր ասել, որ Աստծո արքայության զարգացումը մարդիկ չեն կարող ընդհատել, դա տեղի է ունենում խորհրդավոր ձևով՝ մինչև լիակատար ավարտ: Սուրբ Հոգին շարունակելու է նույն ուժգնությամբ գործել: Եթե մենք մեզ թույլ ենք տալիս նրա կողմից ղեկավարվել և առաջնորդվել, նա մեր մեջ կավարտի ձևավորել նոր արարածին և մենք՝ ոչ կատարյալ մարդիկս, կկարողանանք նմանվել Հիսուս Քրիստոսի կերպարին:

Սուրբ Հոգին շարունակելու է ուժգին գործել առաքյալների ծառայության միջոցով և օժանդակել առաքյալներին, որպեսզի նրանք կարողանան մինչև վերջ իրականացնել իրենց առաջադրանքը: Տիրոջ հարսնացուն նախապատրաստված է լինելու, երբ Տերը գա: Սուրբ Հոգին շարունակելու է ուժգին գործել Քրիստոսի եկեղեցում նաև Հիսուս Քրիստոսի գալուստից հետո: Նա հոգ է տանելու այն բանի համար, որ հավատացյալ քրիստոնյաները սնվեն Սուրբ հոգով՝նաև հակաքրիստոնեական ճնշումների ժամանակ, Մեծ Տխրության ճնշումերիկ ժամանակ: Եթե Հիսուս Քրիստոսի թշնամին խաղի մեջ մտնի, նա ևս չի կարող դադարեցնել Սուրբ Հոգու գործունեությունը: Սուրբ Հոգին հոգ է տանելու այն բանի համար, որ քրիստոնյաները շարունակվեն սնվել իրենով և հավատարիմ մնան Տեր Հիսուս Քրիստոսին: Սուրբ Հոգին ավարտելու է իր գործը: Նա ավարտին է հասցնելու Քրիստոսի եկեղեցին և այն առաջնորդելու է դեպի նոր արարչագործություն, որտեղ նրանք Աստծո հետ հավիտենական միասնության մեջ կգտնվեն: Եթե մենք դա այդպես ենք տեսնում, սիրելի քույր-եղբայրներ, ապա շատ պատճառներ ենք ունենում Սուրբ Հոգի Աստծուն շնորհակալ լինելու, գովաբանելու և փառաբանելու: Մենք այնքան շատ պատճառներ ենք ունենում նրան շնորհակալ լինելու, որ նա մեզ այդքան հարուստ է դարձնում Հիսուս Քրիստոսով: Մենք՝ առաքյալներս, այնքան շատ պատճառներ ունենք նրան շնորհակալ լինելու, որ նա մեզ այդքան հարստացրեց Հիսուս Քրիստոսով: Իսկապես, փառք Սուրբ Հոգի Աստծուն: Նա ավարտելու է իր գործը: Ամեն:

Հիմնական մտքեր

Մենք ճանաչում ենք Սուրբ Հոգի Աստծո ուժը եկեղեցու պատմության մեջ, առաքյալների ծառայության և հավատացյալների ծառայության մեջ:

Մենք պետք է ապրենք Սուրբ Հոգով: Այդ դեպքում մենք Քրսիտոսի գալստյան ժամանակ Սուրբ Հոգու շնորհիվ արթուն կմնանք:

Լուսանկարը՝ Օլիվեր Ռյութենի

Լուսանկարը՝ Շեփինդլերի

Լուսանկարը՝ Անդրեաս Օթենի

Ես այստեղ եմ- Աստծո կողմից սիրված

Միջազգային երիտասարդական օրվա ավարտն ու կուլմինացիան՝ 30 հազար երիտասարդ հավատացյալներ կիրակի առավոտյան հավաքվել էին մարզադաշտում՝ ժամերգության : Գլխավոր առաքյալ Շնայդերն իր քարոզի մեջ ունկնդիրներին հիշեցրեց Աստծո համասփյուռ սիրո մասին: Դա երիտասարդ քրիստոնյաների շնորհիվ պետք է զգալի դառնա միասնության մեջ:

2019-ի հունիսի 2-ին՝ ժամերգության սկզբում, գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը անդրադարձ կատարեց անցած երիտասարդական օրվա երեք օրերին, ներկա առաքյալների անունից շնորհակալություն հայտնեց երիտասարդներին նախապատրաստության համար և շնորհավորելով ասաց. ,, Դուք շատ աշխատանք էիք տարել - և Աստված հաջողությամբ օրհնեց ձեր աշխատանքը,,:

Միջազգային եկեղեցու ղեկավարը հատկապես գովեց միասնականություն կազմելու ձևն ու բովանդակությունը. ,, Դուք կյանքի կոչեցիք միասնությունն ու երիտասարդական օրվա նշանաբանը՝,, Ես այստեղ եմ –այստեղ ես այն ապրել եմ,,:

Շարունակել կրել Աստծո Ավետարանի մոտիկությունն ու սերը

,, Ես այստեղ եմ,- ասում է Աստված,- ես այստեղ եմ քեզ համար,, ,-նշեց գլխավոր առաքյալը: Եվ շարունակեց.,, Աստված ասում է՝ Դա ասա քո մերձավորին: Ես նաև նրա համար եմ այստեղ,,: Գլխավոր առաքյալը ցանկանում էր, որ երիտասարդ քրիստոնյաների պատասխանը բարձր հնչեր՝,, Ես այստեղ եմ, դա ես ուզում եմ անել,,: Աստծո Ավետարանին մոտ լինելն ու սերը շարունակաբար կրելը թող լինի առաջադրանք:

Վկայություն Քրիստոսի համար՝ սիրել և ընդունել

Այն հարցին, թե դա ինչպես կարելի է կիրառել կյանքի այսօրվա պայմաններում, Քրիստոսը աստվածաշնչյան խոսքում հստակ պատասխան է տալիս.,, Մարդիկ ճանաչում են, որ դուք Աստծո աշակերտներն եք, եթե դուք միմյանց հետ ապրում եք սիրո մեջ,,: Սրանով Հիսուսը նկատի չի ունենում մարդկային սերը, երբ մեկը սիրում է և սպասում է պատասխան սիրո, այլ նկատի ունի Աստծո սերը:

Աստծո սերը թող ապրի մեր մեջ Սուրբ Հոգու շնորհի միջոցով: Թող այնպես լինի, որ երիտասարդ հավատացյալները դա իրենց մերձավորին

ապրեցնել տան: ,, Ցույց տվեք մերձավորին, թե ինչպես է Աստված նրան սիրում – շարունակեք տալ նրա սերը,, -կոչ է անում գլխավոր առաքյալը երիտասարդներին:

Բաժանել և միմյանց օգնել

,, Մենք հարուստ ենք Քրիստոսով և ուզում ենք այդ հարստությունը կիսել,,: Դրան է պատկանում ուրախությունը և մերձավորի տառապանքը անկեղծորեն կիսելը: ,,Մենք աղոթում ենք միասին, մենք կիսում ենք միասին,,:

Քրիստոսը մարդկանց կոնկրետ օգնություն էր ցույց տալիս, որպեսզի արտահայտի իր սերը: Գլխավոր առաքյալը ոչ միայն աղոթելու, այլ նաև գործելու կոչ էր անում, որպեսզի մեղմացնեն մերձավորի ցավը- երիտասարդների շրջանակում, համայնքում և եկեղեցում:

Գործել միասին

Քրիստոսը անընդհատ փնտրում էր իրիրաշակերտների միասնությունը: Դա այսօր էլ է կարևոր.,, Մենք պետք է միմյանց հետ լինենք և միասին գործենք- և դա իրական կյանքում, ոչ միայն համացանցով և սմարտֆոններով:,, Աղոթե՛ք միասին, ապրե՛ք ժամերգությունը և տոնե՛ք Սուրբ Հաղորդությունը,, - այսպիսի կոչ էր անում գլխավոր առաքյալը: Երբեմն դրա համար անհրաժեշտ է լինում զոհաբերություն կատարելը.,, Համագործակցիր, եթե անգամ դա քեզ հաճույք չի պատճառում,, - քաջալերում էր նա երիտասարդներին: Միասնական գործունեությունը ուրախություն է բերում:

CՔրիստոսը միշտ ներում էր աշակերտներին և հաշտեցում նվիրում: Երիտասարդների շրջանում ևս կոնֆլիտներ են ծագում: Այս դեպքում արժե օգտվելել Աստծու սիրուց՝ որպես ուժի աղբյուր, որպեսզի ներեն մերձավորին:

Հիմնական մտքեր ապագա սերնդի համար

Նշված ասպեկտներից շատերը երիտասարդներն ապրեցին այս օրերին, -ուրախանում էր գլխավոր առաքյալը: Սակայն, նրա համար կարևոր է այդ հիմնական մտքերը եկեղեցու նոր և ապագա սերնդին փոխանցելը : ,,Աստված սիրում է քեզ և սպասում է քեզնից, որ դու դա ասես մերձավորիդ: Ավետարանի տեղեկացումը սկսվում է նրանով, որ մենք միմյանց սիրենք, միմյանց ընդունենք, միմյանց հետ կիսենք, միմյանց օգնենք, միասին լինենք և ուզենանք միասին գործել, իրար ներենք և հաշտվենք միմյանց հետ,,:

Այս ճանապարհին նորառաքելական երիտասարդները միայնակ չեն: Այլ եկեղեցիներում ևս քրիստոնյաները ծառայում են Վարդապետ Հիսուս Քրիստոսին: ,, Այդ ծառայությունը կայանում է նրանում, որ մարդկանց ցույց տան, որ Աստված սիրում է յուրաքանչյուրին,,: Դրա համար էլ նորառաքելական եկեղեցին լավ հարաբերություններ ունի այլ եկեղեցիների հետ:

Եվ երբ դժվարություններ են առաջանում Ավետարանի տարածման գործում՝ ,, Աստծո սիրով մենք հաղթահարում ենք հիասթափություններն և հակադրությունները ու շարունակում ենք գործել: Եկեք միմյանց սիրենք այնպես, ինչպես Հիսուսն է մեզ սիրում – դա համայնքին, եկեղեցուն, քրիստոնեությանը մի առանձնահատուկ շուք է հաղորդում,,:

Լուսանկարը՝ Շիինալերի

Հիմնական մտքեր

Հովհաննես 13,34,35:

,,Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք միմյանց, ինչպես ես ձեզ սիրեցի, դուք էլ միմյանց սիրեք: Եթե դուք միմյանց սիրեք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն եք,,:

Հիսուսը խնդրում է մեզ սիրել միմյանց այնպես, ինչպես ինքն է մեզ սիրում: Մենք կարող ենք դա անել նրանով, որ համաձայնենք կիսել մեր ուրախություններն ու տառապանքները, միմյանց օգնենք, հավաքվենք, որպեսզի գովաբանենք Աստծուն և ծառայենք նրան ու միմյանց երկուստեք ներենք:

ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՀՐԱՇՔԸ

ԸՍՏ ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅԻ 2, 1-47-Ի

Զատիկից հիսուն օր անց՝ Հոգեգալստյանը, առաքյալներն այն կանանց և տղամարդկանց հետ, ովքեր գնում էին Հիսուսի ետևից, հավաքվեցին Երուսաղեմում գտնվող մի տան մեջ: Նրանք սպասում էին, որ Սուրբ Հոգու ուժը լցվի իրենց մեջ, ինչպես ասել էր Հիսուսը:

Եվ հանկարծ երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման, և լցրեց ամբողջ այն տունը, ուր նստած էին:Եվ նրանց երևացին բաժանված լեզուներ, նման բոցեղեն լեզուների, որոնք և նստեցին նրանից յուրաքանչյուրի վրա: Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս Աստծո մեծ գործերի մասին:
Այդ նույն ժամանակ ուխտավորներ կային Միջագետքից, Ասիայից, Եգիպտոսից, Լիբիայից և Հռոմից, ովքեր այցելել էին քաղաք: Նրանք եկել էին, որպեսզի զոհաբերություն մատուցեն Երուսաղեմի տաճարում: Շատ ուխտավորներ եկան այն տուն, որտեղ իրենց հետ խոսում էին Սուրբ Հոգով լցված աշակերտները:

Այդ ընթացքում նրանք նկատեցին, որ յուրաքանչյուրը ավետիսը լսում է իր լեզվով: Ունկնդիրները հարց տվեցին միմյանց. ,,Չէ՞ որ սրանք բոլորը, որ խոսում են, գալիլիացիներ են, բայց ինչպե՞ս է, որ մենք նրանց լսում ենք մեր յուրաքանչյուրի բարբառով,,:
Մի քանիսը կարծում էին, թե աշակերտները հավանաբար հարբած են: Ապա խոսում է Պետրոսը, նա ասում է. ,,Սրանք հարբած չեն: Այսօր տեղի է ունենում մի մեծ հրաշք: Աստված լցրել է նրանց իր Սուրբ Հոգով, ինչպես խոստացել էր մարգարեների միջոցով,,:Ապա նա պատմում է Հիսուսի մասին, թե նա ինչպես է խաչվել և մահից հարություն առել:
Պետրոսի քարոզը ազդում է մարդկանց սրտերի վրա: Նրանք



հարցնում են առաքյալներին. ,,Ի՞նչ պետք է մենք անենք,,։ Պետրոսն ասում է նրանց. ,Ապաշխարեցեք, և ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և պիտի ընդունեք Սուրբ Հոգու պարգևը,,։

Շատերը հավատում են Պետրոսին և մկրտվում են։ Այսպես, 3 000 մարդ անդամագրվում է քրիստոնյաների համայնքին։ Նրանք հավաքվում են, լսում են առաքյալների խոսքը, աղոթում են և միմյանց հետ հաց են կիսում։ Նրանք կիսում են այն ամենը, ինչ ունեն։

Աղբյուրը՝ Ամագիր երեխաների համար, հրատարակություն 06/2019, Ձևավորումը՝ Իրեկա Ֆորտունատոյի

ԱՅՑ՝ ՌՈՒԲԵՆԻՆ ՄԱՐԱՆԳՈՒԱՓԵՈՒՄ /ԲՐԱԶԻԼԻԱ/



Ողջույն, ես Ռուբենն եմ, բարի գալուստ իմ հայրենիք՝ Բրազիլիա

Բրազիլիան Հարավային Ամերիկայի ամենամեծ և ամբողջ աշխարհում մեծությամբ հինգերորդ երկիրն է: Ես ապրում եմ Ֆորտալեզայի՝ Սիարայի Դաշնային Պետության մայրաքաղաքի մոտ՝ Բրազիլիայի հյուսիսային մասում: Այստեղ ամբողջ տարին շոգ է:

Մեր լողափերը հիանալի են: Շատ զբոսաշրջիկներ գալիս են Ֆորտալեզա, որպեսզի վայելեն ծովն ու լողափերը:

Լողափին և ծովի վրա այստեղ կարելի է տեսնել բազմաթիվ առագաստանավեր, որոնցով ձկնորսները նավարկում են և մեծ ձկներ են որսում:

Ես ունեմ երկու քույր՝ Ռութն ու Ռաքելը, նրանք երկվորյակներ են: Ես նրանց շատ եմ սիրում, նրանք էլ՝ ինձ: Այստեղ դուք տեսնում եք մեզ Մարանգուափեի մեր եկեղեցու առջև: Երկուսն էլ երգում են մարգային երգչախմբում: Հետագայում ես էլ եմ երգելու երգչախմբում: Այն երգերը, որոնք երգվում են, ինձ շատ են դուր գալիս: Թեև ես քարոզից ամեն ինչ չէ, որ հասկանում եմ, հաստատ գիտեմ, որ յուրքանչյուր ժամերգություն առանձնահատուկ է: Իմ հայրն ինձ ասում է, որ մենք ամեն ժամերգության ժամանակ հանդիպում ենք մեր երկնային Հորը:

Իսկ ներսից եկեղեցին այսպիսի տեսք ունի: Իմ հայրը

շրջանային ավետարանիչ է: Շաբաթվա ընթացքում նա ինձ վերցնում է դպրոցից և իր հետ տանում այլ համայնքներ: Ամենշատը ինձ դուր է գալիս Մուկունան: Այնտեղ կա մի գեղեցիկ այգի, որը համայնքի քույրերի կողմից խնամվում է:

Սա մեր ընտանիքն է, իմ ծնունդից կարճ ժամանակ անց: Իմ մայրը հիվանդացել է և մահացել, երբ ես չորս տարեկան էի: Ես նրան շատ եմ կարոտում: Իմ հայրը միշտ ասում է, որ նա ինձ շատ է սիրել: Իմ մայրը երկու դուստրերից հետո ցանկացել է տղա ունենալ և ես եմ ծնվել: Սիրելի Աստված կատարել է նրա ցանկությունը:

Ամբողջ օրը ես դպրոցում եմ: Առավոտները ես այնտեղ կատարում եմ առաջադրանքները, որոնք ես ստացած եմ լինում նախորդ օրը: Իմ այնտեղի ընկերներն են՝ Հայթորը, Վինիսիոսը, Էմանուելան և Սոֆիան: Գիտե՞ք, որ մեզ մոտ գնահատականները 0-ից 10-ն են: 10-ը ամենալավ գնահատականն է: Դպրոցական տարին սկսվում է փետրվարից և ավարտվում է դեկտեմբերի սկզբին: Հուլիսին երկու շաբաթ արձակուրդ ենք ունենում:.

Ես ժամանակ եմ ունենում խաղալու իմ ֆիգուրներով: Այստեղ իմ ձեռքում իմ ամենասիրած ֆիգուրն՝ Մաքս Շթիլը:

Մոտոցիկլի վրա ես գրեթե նմանվում եմ գործող հերոսի, ի՞նչ եք կարծում:

Աղբյուրը՝ Անագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 07/2019: Լուսանկարները՝ մանավոր՝ © marchello74 - stock.adobe.com

Քրիստոսի գալուստը

Քրիստոնյաներին Հիսուսի գալստյանը նախապատրաստելն ու 21-րդ դարի մարտահրավերների հանդեպ զգոն պահելը – դա է առաքյալների ծառայության առաջադրանքը- ինչպես պարզաբանեց գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը համայնքների ուղղված իր գրության մեջ:

Լուսանկարը՝ © iCreations.de - stock.adobe.com

Քրիստոնյաները հավատում են, որ Սուրբ Հոգին ներկա է եկեղեցում և գործում է այնտեղ / Նորառաքելական եկեղեցու դավանաբանությունը հարցերում և պատասխաններում / ՆԱԵԴ Հ/Պ 712/: Մենք ճանաչում ենք Սուրբ Հոգու ներգործությունը եկեղեցում նրանով, որ՝

- Հիսուս Քրիստոսի գալստյան խոստումը միշտ արթուն է պահվում / ՆԱԵԴ Հ/Պ 203/:
- Առաքյալները՝ լցված Սուրբ Հոգով, կատարում են այն աշխատանքը, որ նախապատրաստեն հավատացյալներին Հիսուս Քրիստոսի գալստյանը / ՆԱԵԴ Հ/Պ 433/:
- Հոգեպապար քարոզն ունի այն նպատակը, որ համայնքին ուղղորդի դեպի Հիսուսի գալուստը / ՆԱԵԴ Հ/Պ 626/:

Դավանաբանության մեջ գրված է, որ ,, առաքյալների ծառայությանն են պատկանում Քրիստոսի գալստյան մասին տեղեկացնելն ու համայնքներին դրան նախապատրաստելը,, / ՆԱԵԴ Հ/Պ 442/: Ինձ թվում է,թե մենք մեզ հարց կտանք, թե որ ձևն է լավագույնը Տիրոջ գալստյան մասին տեղեկացնելու և այսօրվա ժամանակներում այդ խոստումը վառ պահելու համար:

Տիրոջ գալստյան տեղեկացման գործում խանգարող հանգամանքները

Առաջին քրիստոնյաները համոզված էին, որ Քրիստոսի գալուստը ուղղակի մոտ է լինելու: Սակայն, խոստման չիրականացումը առաքյալների գործունեության ընդհատման հետ միասին՝ քրիստոնյաներին հանգեցրին մի կարծիքի, որ Տիրոջ գալուստը ավելի ու ավելի հեռավոր ապագա է հետաձգվել:

Տիրոջ մոտալուտ գալուստը տեղեկացնելը նորից սկսվեց առաքյալների ծառայության վերականգնման հետ: Սակայն, մենք ամրագրում ենք, որ Հիսուսի գալստյան խոստումը այն ոգևորությունը չունեցավ, որին արժանի էր: Դրա պատճառները բազմազան են: Ստորև նշվում են մի քանիսը՝

- Առաքյալները Տիրոջ մոտալուտ գալստյան մասին տեղեկացնում են 19-րդ դարի 30-ական թվականներից ի վեր, իսկ այն դեռ տեղի չի ունեցել: Վերջին ժամանակի մասին սպասված նշանները տարբեր մեկնաբանությունների տեղիք են տալիս, որոնք հաճախ սխալ են լինում:
- • Այն իրողության պատճառով, որ կյանքի պայմանները շատ վայրերում բարելավվել են, հատկապես այդտեղ հավատացյալները կյանքի դեպի այդ ,, վերջը,, տանելու և այդ աշխարհից ,, փրկվելու,, կարիք չեն զգում: Շատերը, նաև վատ ապրողները, իրենց գոյությունը բարելավելու համար ավելի շատ ուշադրություն են դարձնում տնտեսական և սոցիալական առաջընթացին, քան Աստծուն:
- Դեպքերի գերբնական բնույթը, որը մենք տեղեկացնում ենք / Քրիստոսի գալուստ, մահացածների հարություն, ողջերի համաբարձում, հազարամյա խաղաղության թագավորություն/, մեր ժամանակակիցների մի մասի համար մեր քարոզը դժվար հասկանալի են դարձնում: Անգամ մեր շարքերում, ուսուցչական անձնակազմի որոշ անդամներ խորհուրդ են տալիս այդ թեմայով երեխաների հետ չխոսել, որպեսզի նրանց տրավմայի չենթարկեն:
- Շատերը չեն հասկանում այն միտքը, որ Հիսուսը իր գալստյան ժամանակ կարող է դատ իրականացնել: Աստծո կողմից դատվելու տեսլականը նրանց համար սարսափելի է և չի համապատասխանում այն պատկերին, որ նրանք ունեն Հիսուսի մասին: Հիշենք, որ շատ հավատացյալներ ապրում են մի ընտանիքում, ովքեր կազմվել են նորառաքելական քրիստոնյաներից և ոչ նորառաքելական քրիստոնյաներից, կամ եկեղեցու պարկտիկ ու ոչ պրակտիկ անդամներից: Այն տեսակետը, որ Քրիստոսի գալստյան ժամանակ իրենք միմյանցից բաժանվելու են, նրանց ցավ է պատճառում և չի գոհացնում:
- Մեր ուսմունքը ապագա երևույթների մասին չի համընկնում այլ դավանանքի մարդկանց տեսակետների հետ: Երբ մենք խոսում ենք Տիրոջ գալստյան մասին, ապա նկատում ենք, որ ավելի շատ տարբերություններ, քան նմանություններ կան այլ քրիստոնյաների հետ: Իսկ երբ մենք ուսուցանում ենք այն,որ մենք պետք է կնքվենք կենդանի առաքյալի կողմից, որպեսզի պատկանենք Քրիստոսի հարսնացուների թվին, դա դիտվում է որպես բացառիկություն կամ աղանդավորություն:

Մենք խոսում ենք Տիրոջ գալստյա՞ն մասին

Սա մեզ չպետք է վիատեցնի մեր առաջադրանքը կատարելու՝ Տիրոջ մոտալուտ գալստյան մասին տեղեկացնելու գործում: Որպեսզի հասկանալի դառնա, մենք պետք է գործենք Պողոս առաքյալի նման նրանով, որ մենք կենտրոնանանք մեր ունկնդիրների վրա / Կորնթացիներին Ա 9, 20-23/: Տիրոջ գալստյան մասին մեր այսօրվա քարոզը պետք է ընդգրկի հետևյալ ասպեկտները՝

Ինչպես Հիսուս Քրիստոսի հարությունն ու համբարձումը, այնպես էլ գալուստը ըմբռնելի է լինում միայն հավատի միջոցով: Տերը բացատրել է, որ հնարավոր չէ իր գալստյան պահը որոշել / Մատթեոս 24,44; Ղուկաս 17,20/: Նա պարզ ասում էր իր առաքյալներին. ,, Ձեզ տրված չէ իմանալ այն ժամերը և ժամանակները, որ Հայրը հաստատեց իր իշխանության վրա / Գործք առաքելոց 1,7/: Մարկոսի 13-ում մենք գտնում ենք Հիսուսի վկայություններն այն իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունենալու իր գալուստից առաջ: Լինելու են պատերազմներ, երկրաշարժեր, սով, հալածանքներ, սուտ մարգարեներ, որոնք հրաշքներ և նշաններ են անելու: Այդ ամենը տեղի է ունեցել անցած դարերի ընթացքում: Այն իրողությունները, որ այդ երևույթներն այսօր ցույց են տալիս, չեն կարողանում այլ ձևով պարզաբանել, քան՝ Քրիստոսի մոտալուտ գալստյան վկայություն: Բոլոր դեպքերում, մենք կարող ենք եզրակացնել, որ դրանք փրկության պլանը ոչ մի դեպքում չեն կարող խաթարել: ,, Ժամանակի նշանի մասին խուսափենք խոսել՝ հավատացյալներին Հիսուսի մոտալուտ գալստյան մասին համոզելու նպատակով: Մենք հավատում ենք Տիրոջ գալստյանը, քանի որ Հիսուսը դա խոստացել է, և դա մեզ տեղեկացրել է Սուրբ Հոգին: Մենք հավատում ենք, որ Հիսուսը գալու է շուտով, քանի որ երկրի վրա նորից գործում է առաքյալների ծառայությունը, որպեսզի նախապատրաստի նրա գալստյանը:

Այն փրկությունը, որը մեզ առաջարկում է Աստված, ավելին է, քան մեր նյութական վիճակի բարելավումը: Նա ցանկանում է մեզ իր արքայություն տանել, որտեղ բացակայում են չարն ու նրա բոլոր դրսևորումները / տառապանք, անրադարություն, սուտ, կեղծավորություն, ատելություն և մահ/: Աստված մեզ ուզում է տալ հավերժական կյանք, այսինքն՝ իր հետ հավիտենական միասնությունը: Երկնային հայրենիքում / Եբրայեցիներին 11,14-16/ մարդիկ ապրելու են Աստծո և միմյանց հետ ներդաշնակության մեջ: Նրանք կազմելու են մարդկանց մի միասնություն, որոնք տարբերվելու են միմյանցից, բայց և միասնական են լինելու- Սուրբ Երրորդություն Աստծո պատկերի նմանությամբ: Մեր մոտիվացիան աշխարհից հեռանալը չէ կամ մոտալուտ աղետից փախչելը: Մեզ համար Աստծո արքայություն գնալը փախուստ չէ, այլ՝ լիակատար վերջաբան: Մենք հույս ունենք լինել այնտեղ, որի համար Աստված մեզ արարել է:

Մենք չենք վիճարկում, որ մարդիկ, ովքեր բարի կամք ունեն և միավորում են իրենց ձգտումները, կարող են որոշակի ժամանակի համար և մարդկության որոշակի մասի համար խաղաղություն, արդարություն և բարեկեցություն ստեղծել: Սակայն, մենք համոզված ենք, որ դա չեն կարող ստեղծել ողջ մարդկության և բոլոր ժամանակների համար: Միայն ամենազոր Աստված կարող է բոլոր մարդկանց բոլոր ժամանակներում օգնել նրանով, որ նա ինքն է միջամտում պատմությանը: Որդի Աստծո մարդացումը Աստծո կողմից նման մի ուղիղ միջամտություն էր մարդկային պատմության մեջ: Հաջորդ ուղիղ միջամտությունները կայանում են Հիսուս Քրիստոսի գալստյան մեջ, ապա առաջնեկների հետ զորությամբ և փառահեռությամբ նրա գալու մեջ, իսկ ավելի ուշ՝ Վերջին դատաստանի մեջ: Բոլոր այդ աստվածային միջամտությունները վեր են մարդկային հասկացողությունից և ըմբռնելի են միայն հավատի միջոցով: Մենք այն չենք համարում վախեցնող սպառնալիք, այլ՝ մարդկանց հանդեպ Աստծո սիրո արտահայտություն:

Իր անտեսանելի գալստյան ժամանակ Տերը իր հետ է տանելու միայն ընտրյալներին, որոնք ունեն պահանջվող հասունությունը: Այդ դատաստանի հանդեպ մեր տեսակետը մեզ գիտակցել է տալիս այն անհրաժեշտությունը, որ մենք դրան լրջորեն նախապատրաստվենք:: Դա ևս չպետք է մեզ վախեցնի: Մենք մեր ողջ հույսը դնում ենք ողորմածության վրա, որը Տերը նվիրում է հավատացյալներին, որոնք իսկապես ողջ ցանկությամբ ձգտում են նրա հետ միասնության / Պետրոս Ա 1,13/:

Հիսուսը նորից է գալու, որպեսզի իր հետ տանի հարսնացուական համայնքին և նրա հետ երկնքում տոնի Գառան հարսանիքը: Հարսնացուի պատկերը վկայում է սիրո միասնականության պատկերացումը, հարսանիքի պատկերը՝ կիսելու և ուրախության հիմնական գաղափարը: Սակայն, հարսնացուի համբարձումը չի նշանակում ավարտ: Այն դիտարկվելու է որպես փրկության պլանի մի մաս: Նրանք, ովքեր պատկանում են հարսնացուական համայնքին, կանչված են իրականացնելու մի առանձնահատուկ առաջադրանք, այն է՝ տեղեկացնել Ավետարանը՝ խաղաղության հազարամյա թագավորությունում՝ բոլոր մարդկանց , բոլոր ժամանակներում: Աստծո գործունեությունն ուղղված է այն նպատակին, որ բոլոր մարդկանց համար հնարավոր դարձնի հավիտենական կյանքը, Աստծո և միմյանց հետ կատարյալ միասնության հասնելը:

Մենք կենդանի ենք պահում գալստյան խոստումը

Առաքյալներն ընդունել են առաջադրանք՝ նվիրաբերելու Սուրբ Կնունքը, որով հավատացյալը դառնում է Աստծո ժառանգորդ, և ապա նրան նախապատրաստելու Քրիստոսի գալստյանը: Այդ նախապատրաստությունը պահանջում է հավատացյալի հետ ակտիվ համագործակցություն՝ յուրաքանչյուրը պետք է ստեղծի իր սեփական փրկությունը / Փիլիպացիներին 2,12/: Դրա համար էլ կարևոր է մեզ համար հավատացյալներին մոտիվացնելը, նրանց մեջ Տիրոջ գալստյան խոստումը արթուն պահելը:

Նրանց Տիրոջ գալստյանը ակտիվ նախապատրաստվելու ազդակ հաղորդելու համար մեր տրամադրության տակ ունենք երկու հնարավորություն՝

- շատացնել նրանց սերը,
- եկեղեցին կազմավորել որպես գալիք արքայության նախաճաշակում:

Հավատացյալների սերը շատացնել

Սուրբ Կնունքի միջոցով Աստված մարդուն նվիրում է իր էությունից մի մասնիկ նրանով, որ նրան տալիս է իր սիրո շնորհը / Հռոմեացիներին 5,5/: Այդ սիրուց զարգանում է հավատացյալների ցանկությունը՝ արձագանքելու նույն սիրուն / Հովհաննես 4,19/: Մենք կարող ենք այդ սերը շատացնել հավատացյալի սրտում նրանով, որ մենք՝

- նրան ցույց տանք Հիսուսի զոհաբերության մեծությունը,
- նրա համար հնարավոր դարձնենք ունենալու Քրիստոսի վաստակի մասնիկը,
- տեղեկացնենք այն ժառանգության մասին, որը Տերը նար համար պատրաստ պահում է,
- նրան ճաշակել տանք Քրիստոսի սերը մեր հոգատարությամբ և ընբռնողականությամբ:

Աստծո զավակը, որը իսկապես ճանաչում է Քրիստոսի սերը, արմատավորված է այդ սիրո մեջ, նա լի է Աստծո ողջ լիությամբ / Եփեսացիներին 3, 17-19/: Ցանկալի է Հիսուսի մոտ լինելը: Այդ ցանկությունն իր արտահայտումն է գտնում մեր ամենօրյա աղոթքում՝ ,, Արի, Տեր Հիսուս,, / Հայտնություն 22,20/: Սակայն, դա երևում է նաև Աստծո հետ կյանքի միասնության մեջ լինելու մշտական ձգտման մեջ:

Առաքյալների ուսմունքի շնորհիվ Սուրբ Ընթրիքի ճաշակմամբ հավատացյալները կարողանում են

աճել Քրիստոսով: Քրիստոսի սերը նրանց ունակ է դարձնում հաղթահարելու եսասիրությունն ու անտարբերությունը, և բաց լինելու մյուսների համար : Նրանք՝

- հետաքրքրվում են մերձավորի վիճակով ու հոգ են տանում նրա համար,
- փորձում են իրենց վկայությամբ խոսքով և գործով ազդելու, որ մյուսները էլ Քրիստոսին հայտնաբերել կարողանան:
- ձգտում են, որ Ավետարանը անխաթար քարոզվել կարողանա բոլոր մարդկանց- դրա համար նրանք աղոթում են Աստծուն՝ իրենց փրկության պլանը իրականացնել շարունակելու նրանով, որ իր Որդուն ուղարկի և հաստատի խաղաղության արքայություն:
- Ակտիվ նախապատրաստվում են, դառնալու Աստծո և Քրիստոսի խաղաղության թագավորության քարոզիչներ, որպեսզի բոլոր մարդկանց տեղեկացնեն փրկությունը:

Photo: © sewcream - stock.adobe.com

Եկեղեցին գալիք արքայության նախաճաշակում

Երբ փարիսեցիները Հիսուսին հարց տվեցին, թե երբ է գալու Աստծո արքայությունը, նա պատասխանեց, որ այն իրենց մեջ է լինելու / Ղուկաս 17,20,21/: Գործնականում արքայությունն արդեն ներկա էր նրանց անձի մեջ, ովքեր նրան հավատում են, կարող են երկրի վրա նրա միջոցով ապրել Աստծո արքայությունը:

Մեր օրերում Հիսուսն իր եկեղեցում ներկա է Սուրբ Հոգու միջոցով: Նրա մեջ նա գործում է խոսքով և խորհուրդներով ու ղեկավարում է իր առաքյալների միջոցով: Այնտե, որտեղ Սուրբ Հոգին գործում է Հիսուս Քրիստոսի կողմից լիազորված ծառայությամբ, հավատացյալները Սուրբ Հաղորդությամբ ապրում են ներքին միասնություն Հիսուս Քրիստոսի և միմյանց հետ: Դրանով նրանք կարող են այստեղ՝ երկրի վրա, հասնել Աստծո գալիք արքայության փրկության նախաճաշակմանը:

Հավատացյալը, ով զոհանում է Տիրոջ գալստյանը սպասելու նրանով, որ աղոթում է և այցելում ժամերգության, ի վերջո հոգնում է սպասելուց: Եթե նա արդեն նախապես կարողանում է ճաշակել գալիք արքայության ուրախությունը, նա մոտիվացվում է այնտեղ գնալ ուզենալու համար: Սուրբ Հոգուց եկող ուժով մենք աշխատում ենք, որ եկեղեցին կազմավորվի որպես Աստծո գալիք արքայության նախաճաշակում: Մեր նպատակն է, որ յուրաքանչյուրին հնարավոր լինի ճանաչելու, որ Հիսուսն է ղեկավարում իր եկեղեցին: Հիսուս Քրիստոսի ներկայությունը ճանաչելի է հետևյալ նշաններով՝

- Խուլերը, համրերը և կաղերը բուժվելու են – Հիսուսի օգնությամբ մենք կարող ենք ամեն ինչ հաղթահարել, որոնք կխանգարեն մյուսների հետ շփումներն ու հարաբերությունները,
- Բողոքավորները լռում են / Երեմիա 8,9/, այլևս չեն խոսում այն սխալների մասին, որոնք Հիսուսը ներել է,
- Վեճն այն բանի վերաբերյալ, թե ով է ավելի մեծ, ավարտվում է, յուրաքանչյուրը պատրաստ է ծառայել մյուսներին / Մարկոս 9; 34,35/:
- Մարդկային տարբերություններն անհետանում են՝ հոգուտ Քրիստոսի հետ միավորման / Գաղատացիներին 3,28/:
- Հոգևորի մասին հոգացությունը այլևս նյութականով չի սպառնվում / Մարկոս 8,14-18/:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 243,8051 Ցյուրիխ / Շվեյցարիա Ֆրիդրիշ Բիշոֆ
հրատարակչություն ՍՊԸ, Ֆրանկֆուրտյան փողոց 233,63263 Նոյ- Իզենբուրգ/ Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Տեղեկացում

06.10.2019	Սանկտ Պետերբուրգ (Ռուսաստան)
13.10.2019	Մոնրովիա(Լիբերիա)
20.10.2019	Մյուլուզ(Ֆրանսիա)
27.10.2019	Կուալա Լումպուր (Մալայզիա)
30.10.2019	Քալայ (Մյանմա)
03.11.2019	Յանգոն (Մյանմա)
10.11.2019	Նորդերշտեդ (Գերմանիա)
17.11.2019	Սանկտ Գալլեն (Շվեյցարիա)
01.12.2019	Մալագա (Իսպանիա)
08.12.2019	Լյուդվիգսբուրգ (Գերմանիա)
13.12.2019	Վալֆիշբուխտ (Նամիբիա)
15.12.2019	Իստ Լոնդոն (Հարավային Աֆրիկա)
22.12.2019	Հերսֆելդ-Լաութերբախ(Գերմանիա)
29.12.2019	Շտադե (Գերմանիա)

New Apostolic Church
International